Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի մարզային փուլի – 2024-2025 ուս. տարի

9 – րդ դասարան

1. ա-սխալ; բ-սխալ; գ-ճիշտ; դ-ճիշտ; ե-սխալ; զ-ճիշտ; է-սխալ; ը-սխալ (**յուր.՝ 0.25միավոր**)

2. դ (**1 միավոր**)

3. Եգիպտոս (**1 միավոր**)

4. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք (**0.5միավոր**): Բովանդակային ցանկացած սխալի դեպքում գծագրի համար **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում (օր.՝ առանցքների մոտ չեն նշել չափման միավորը) կարող է տրվել **0.25միավոր:**



ա. – 28սմ (**0.5միավոր**)

բ. – 1.26մ^2 կամ 1.3մ^2 (**0.5միավոր**; ընդունել նաև սմ^2-ով հաշվարկները)

գ. – 0.63 մ^3/վրկ կամ 0.65 մ^3/վրկ (**0.5միավոր**; ընդունել նաև այլ համարժեք չափման միավորներով հաշվարկները)

դ. – 489888հա կամ 505440հա (**1միավոր**): Եթե ճիշտ է հաշվարկած միայն 100 օրվա հոսքը՝ 0.5միավոր)

5. ա. Խ=երկարություն/տարածք: Ճիշտ պատասխանը **Է** մարզն է 600կմ/1000կմ^2 **1միավոր:** Չափման միավորներում սխալի կամ չգրելու դեպքում **նվազեցնել 0.25միավոր:**

Եթե պատասխանը ճիշտ է, սակայն հաշվարկը ներկայացված չէ՝ **0.5միավոր**:

բ. Հավանական պատճառներից կարող են լինել լեռնային ռելիեֆը (ճիշտ համարել նաև ռելիեֆի մասնատվածությունը), տարածքի յուրացվածության մեծ տարբերությունները՝ պայմանավորված բնակլիմայական պայմաններով, տնտեսության մասնագիտացման տարածական առանձնահատկությունները, պատմական գործոնը՝ ի նկատի ունենալով գաղութային անցյալում հիմնված երկաթուղիների նպատակը կամ տարածքների ընդարձակումը պատմական իրադարձությունների ընթացքում:

6. Ճիշտ համարել հետևյալ ծովերից որևէ չորսը՝ Սուլուի, Բանդա, Ճավայի, Իռլանդական, Ֆլորես, Ֆիջի, Սուլավեսիի կամ Ցելեբեսյան, Բոհոլ կամ Մինդանաո, Բալի, Մոլուքյան, Կամոտես, Սամար, Վիսայան: Ճիշտ համարել նաև Ֆիլիպինյան ծովը: Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել 0.25միավորով:

7. ա. Դենալի, Էլբրուս, Էվերեստ, Չիմբորասո

բ. Վայոց ձոր, Լոռի, Շիրակ, Կոտայք

Երկու դեպքում էլ իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար աշակերտին շնորհել **0.25միավոր**

8. ա. ԽՍՀՄ տարիներին Հայաստանի տարբեր բնակավայրերում գործում էին արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք աղտոտում էին մթնոլորտը, սակայն ԽՍՀՄ փլուզմամբ արդյունաբերությունը մեծամասամբ դադարեց գործել, ինչը նպաստեց օդի որակի բարելավմանը: Լիարժեք պատասխանը՝ **1միավոր**

բ. Հյուսիսային Աֆրիկայի տարածքի մեծ մասը Սահարա անապատն է, իսկ երկրները՝ նախկին գաղութներ: Երկու գործոններն էլ նպաստել են նրան, որ սահմաններն անցկացվեն միջօրեականներով և զուգահեռականներով: Լիարժեք պատասխանը՝ **1միավոր**

9. ա. 0 կամ 360 ազիմուտով (**0.5միավոր**) պետք է գնան 4 կմ (**0.5միավոր**):

բ. 90 ազիմուտով (**0.5միավոր**) պետք է գնան 2 կմ (**0.5միավոր**):

10. ա. Տեղաբաշխումը համատարած է: Երկուսն էլ հին ճյուղեր են, հիմնականում աշխատատար, հետևաբար ապահովում են բնակչության զբաղվածություն: Երկուսն էլ թողարկում են առաջին անհրաժեշտության կամ կենսական իրեր, հետևաբար ցանկացած երկրում առկա են նման արտադրություններ: Բովանդակորեն մոտ, սակայն թերի պատասխանի դեպքում շնորհել 0.75միավոր:

բ. Եվրասիայում (**0.5միավոր**), քանի որ այդ մայրցամաքի տարածքով են անցնում Խաղաղօվկիանոսյան Հրե օղակի և Ալպ-Հիմալայան լեռնակազմական գոտիների (գեոսինկլինալների) ընդարձակ հատվածներ (**0.5միավոր**): Մայրցամաքի փոխարեն միայն Ասիա նշելու դեպքում նվազեցնել 0.5միավոր:

11. Ա-2; Բ-4; Գ-3; Դ-1 (**յուր.՝ 0.5միավոր**)